ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՅՔԻ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

REPUBLIC OF ARMENIA
CLOSED JOINT-STOCK COMPANY OF ROAD
BUILDING AND EXPLOITATION OF VAYK

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ВАЙКСКОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ
ОБЩЕСТВО ПО ЭКСПЛУАТАЦИИ И
СТРОИТЕЛЬСТВУ ДОРОГ

3805 Վայոց Ձոր մարզ
Վայք համայնք, Զառիթափ
բնակավայր 23 փողոց 2
հեռ. 0 282 2-25-12
Էլ. փոստ vaykichshsh@mail.ru

3805 Vayots Dzor region
Vayk community, Zaritap
plase of residence 23 street 2
tel. 0 282 2-25-12
E-mail vaykichshsh@mail.ru

3805 Вайоц Дзор область
сообщество Вайк , место
жительства Заритап 23 улица 2
тел. 0 282 2-25-12
Эл. почта vaykichshsh@mail.ru


*« 21 » նոյեմբեր 2024թ.*

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ՊԱՐՈՆ ՎԱՐՍԵՆՅԱՆԻՆ

**Հարգելի պարոն Արսենյան.**

«ՎԱՅՔԻ ՃՇՇ» ՓԲ Ընկերությունը ցանկանում է ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից ստանալ թույլտվություն ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար:

Ձեր համաձայնությամբ 24.11.2023թ. և 8.10.24թ. Ջերմուկի համայնքապետարանում և Գնդեվազ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց արդյունքում համայնքը ծրագրի վերաբերյալ հայտնել է դրական դիրքորոշում:

Չնայած դրան, փորձաքննող մարմինը՝ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ը, ծրագրին տվել է բացասական եզրակացություն՝ այն պատճառաբանությամբ, որ հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատներից մեկը գտնվում է Արփա գետի ջրապահպան գոտուն մոտ:

Ընկերությունը հաշվի առնելով Լիազոր մարմնի տված ստորաբաժանման դիտողությունը խմբագրել է հայցվող տեղամասի կոորդինատներն ու կազմել ուսումնասիրության նոր ծրագիր և ՇՄԱԳ հաշվետվություն:

Գործընթացը կրկին սկսելու համար խնդրում եմ կազմակերպել հանրային քննարկում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին օրենքի (ՀՕ-150-Ն 03.05.2023թ.) 28-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ Կառավարության 2023թ. դեկտեմբերի 28-ի N2343-Ն որոշման պահանջներին համապատասխան:

Սույն գրությանը կից ներկայացնում եմ հայցվող տեղամասի հատակագիծն ու ծայրակետային կոորդինատները:

Հարգանքով՝
«ՎԱՅՔ ՃՇՇ» ՓԲԸ տնօրեն՝ Կ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի 3-րդ տեղամասի հատակագիծն ու ծայրակետային կոորդինատները




1.X=8549086.42 Y=4397663.90
2. X=8549242.54 Y=4397830.65
3. X=8549280.02 Y=4397850.05
4. X=8549321.69 Y=4397853.19
5. X=8549358.12 Y=4397846.29
6. X=8549383.56 Y=4397827.90
7. X=8549244.62 Y=4397758.64
8. X=8549209.35 Y=4397665.01
1 X=8549086.42 Y=4397663.90